Հանրային օֆերտա «ԱնիմաՌենդեր»

Խնդրեմ, մինչ «ԱնիմաՌենդեր ծառայություններից» օգտվելը կարդացեք օֆերտայի տեքստը:

«ԱնիմաՌենդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Գլխավոր տնօրեն Յու. Վ. Սոտնիկովի, այսուհետև՝ «Կատարող», առաջարկում է պատկերների ավտոմատացված և բարձր արտադրողականության CPU/GPU ռենդերի ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություններ) ցանկացած ֆիզիկական անձի, իրավաբանական անձի, կամ անհատ ձեռնարկատիրոջ, այսուհետև՝ «Պատվիրատու», համապատասխան սույն առաջարկության դրույթների:

Սույն առաջարկությունը, համաձայն ՌԴ Քաղաքացիական օրենսդրության 437 հոդվածի 2 կետի համարվում է լրիվ և անվերապահ հաստատված (ակցեպտավորված) Հանրային օֆերտա (այսուհետև՝ Պայմանագիր), որի միջոցով, համաձայն ՌԴ Քաղաքացիական օրենսդրության 438 հոդվածի, իրագործվում են լրիվ կամ մասնակի վճարման հիմունքներով ռենդերի ծառայություններ, նշված Կատարողի Վեբ-կայքում https://animarender.com.

1.Տերմիններ և հասկացություններ

1. «Կողմ» կամ «Կողմեր» - Պատվիրատու կամ Կատարող, կամ միասին Պատվիրատու և Կատարող:

1.2. «Նախագիծ» - Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրված մեկ կամ ավելի տեսարաններ ռենդերի ծառայություններ մատուցելու նպատակով:

1.3. «Ռենդեր-ծառայություններ» — ցանկացած ծառայություն, որ սեփական հաշվողական հզորությունների օգտագործումով տրամադրում է Կատարողը Նախագծի ռենդերի ընթացքում:

1.4. «Փաթեթ» — ռենդերի որոշակի ժամերի քանակ պարունակող առաջարկ, որ ծախսվում է ռենդերի ընթացքում, կապված Նախագծի բարդության և ծավալի հետ:

1.5. «Վեբ-կայք» - «https://animarender.com/»:

2. Համաձայնության փոփոխություն

2.1. Կատարողն իրեն իրավունք է վերապահում փոփոխել սույն Համաձայնագրի պայմանները և այդ մասին տեղեկացնել Պատվիրատուին՝ հրապարակելով սույն Համաձայնագրի թարմացված տարբերակը Վեբ-կայքում:

3. Ծառայությունների մատուցումն ու կողմերի պատասխանատվությունը

3.1. Կատարողն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ, առանց պատճառների բացատրության, հրաժարվել ապագա Նախագծից կամ չեղարկել ընթացիկ Նախագիծը Պատվիրատուի կողմից նախորդ Նախագծերի համար մատուցված ծառայությունների արժեքը չվճարելու դեպքում:

3.2. Կատարողը տրամադրում է անվտանգ, բարձր հասանելիության FTP սերվեր Պատվիրատուի տվյալների տրանսֆերի և պահպանման համար:

3.3. Կատարողը պարտավորվում է.

- ապահովել, համաձայն Հաճախորդի Նախագծի, անհրաժեշտ սարքավորումների և ծրագրային ապահովման հասանելիությունը՝ համապատասխան հաշվարկները կատարելու համար,
- պահպանել սարքավորումները և/կամ ծրագրային ապահովումը աշխատունակ վիճակում,
- իրականացնել սարքավորումների և/կամ ծրագրային ապահովման տեխնիկական օժանդակությունը,
- Հաճախորդին տեխնիկական օժանդակություն ցուցաբերել կապված սերվիսի աշխատանքի հետ:

3.4.Կատարողը պահոց է տրամադրում Պատվիրատուի ռեսուրսների արդյունքների ու ֆայլերի համար ռեսուրսների գործառույթի ավարտի պահից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Այդ ժամկետի ավարտից հետո Կատարողն իրավունք ունի անվերադարձ հեռացնել Հաճախորդի ռեսուրսների արդյունքներն ու ֆայլերը, եթե այլ բան սահմանված չէ սույն օֆերտայով:

3.5.Հաճախորդը պարտավոր է, մինչ ծառայությունների մատուցումը, վճարել Ծառայությունները անձնական կայքում՝ հաշվեկշիռը դրամական միջոցներով համալրելու եղանակով: Ծառայությունների ավարտից հետո դրամական միջոցները ավտոմատ կերպով դուրս են գրվում Հաճախորդի հաշվից, եթե պայմանագրով կամ համաձայնագրով այլ բան նախատեսված չէ: Դրամական միջոցները վերադարձման ենթակա չեն: Մատուցվող ծառայությունների ծավալի նվազեցման__կամ Հաճախորդի կողմից ծառայություններից հրաժարվելու դեպքում Հաճախորդի դրամական միջոցների մնացորդը ենթակա է հաշվանցման Կատարողի հաշվին այլ ծառայությունների մատուցման դիմաց:

3.5.1. Կատարողի կողմից Ծառայությունների տարիֆիկացիան հաշվարկվում է պայմանական միավորներով – «ԱնիմաՊոինտ» («ԱՊ»):

3.5.2. Ծառայության արժեքը պայմանական միավորներով, ինչպես նաև պայմանական միավորի գինը ռուբլիներով հաստատվում է համապատասխան Կատարողի ծառայությունների մատուցման գործող սակագների:

3.6.Հաճախորդը պարտավորվում է ներկայացնել Նախագծեր, որոնք համատեղելի են Կատարողի կողմից գործարկվող ծրագրային ապահովման տարբերակի հետ: Այս կետի չկատարման դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում Նախագծի ռեսուրսների հնարավոր վատ արդյունքի համար:

3.7. Կատարողի կողմից ոչ պատշաճ ծառության մատուցման դեպքում (Կատարողի աշխատակիցների մեղքով, սարքավորման անսարքության կամ այլ պատճառներով, որոնց համար Կատարողը պատասխանատու է), Հաճախորդը իրավունք ունի Կատարողից պահանջել կրկնակի ռեսուրսների կատարում առանց իր հաշվեկշռի վրա լրացուցիչ դրամական մրջոցներ փոխանցելու:

3.8. Կատարողի ծառայություններից օգտվելու ժամանակ Հաճախորդն իրավունք ունի գրանցվելով Վեբ-կայքում և ստեղծել միայն մեկ հաշվառման հաշիվ: Մեկ հաճախորդին արգելվում է բազմաթիվ անգամ գրանցվել: Օգտագործողի անձի նույնականացման համար Կատարողը կարող է կիրառել ցանկացած վերլուծական համակարգ և ցանկացած եղանակով ստուգել Հաճախորդի կողմից սույն դրույթի կատարումը, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևել IP հասցեին, կատարել Հաճախորդի առաջադրանքների բնույթի, միջոցների, վճարման վավերապայմանների վերլուծությունը:

3.9. Կատարողը, 3.8. կետի պայմանների խախտման դեպքում, իրավունք ունի իր հայեցողությամբ, առանց Հաճախորդին տեղեկացնելու, ընտրողաբար կամ միակողմանիորեն միաժամանակ հրաժարվել ծառայությունների մատուցումից, արգելափակել Հաճախորդի բազմաթիվ հաշվառման հաշիվները, հրաժարվել Հաճախորդին վերադարձնել դրամական միջոցները և արգելափակել տվյալների փոխանակումը այդ հաշվառման հաշիվների միջոցով:

4. Ծառայությունների հասանելիություն

4.1. Կատարողի ծառայություններ մուտք գործելու հնարավորություն ստանալու համար Հաճախորդը պարտավոր է ստեղծել օգտագործողի հաշվառման հաշիվ՝ մուտքագրելով պահանջվող տվյալները գրանցման

ձևերի դաշտերում: Գրանցվելով Վեբ-կայքում, Հաճախորդը անձնական տվյալների մշակման փաստացի համաձայնություն է տալիս:

4.2. Հետագայում անձնական կայք մուտք գործելու համար Հաճախորդը Կատարողից ստանում է գաղտնաբառ՝ գրանցման ժամանակ նշված էլեկտրոնային փոստի հասցեով: Հաճախորդը պատասխանատվություն է կրում գաղտնաբառի պահպանման և հաշվառման հաշվի մուտքային տվյալները կողմնակի անձանցից պաշտպանելու համար:

5. Սակագներ

5.1. Կատարողը մատուցում է ծառայություններ համաձայն Վեբ-կայքի սակացուցակներում, բոնուսային ծրագրերում և հատուկ առաջարկություններում նշված գների:

5.2.Կատարողը իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ փոխել սակագնային պլանը, խմբագրել բոնուսային ծրագրերն ու հատուկ առաջարկությունները առանց Հաճախորդին նախօրոք այդ մասին տեղյակ պահելու:

5.3. Ծառայությունների վճարումը իրականացվում է անձնական կայքում, դրամական միջոցների մուտքագրման ցանկացած տրամադրված եղանակով:

5.4. Միջոցների ստացումից հետո, Կատարողը, համաձայն սույն օֆերտայի 5 կետի Հաճախորդի հաշվին է փոխանցում ներքին վալյուտայի համապատասխան քանակության ԱնինմՊոինտ միավորներ (ԱՊ):

5.5. Գնելուց հետո ԱՊ վերադարձման ենթակա չեն:

5.6.Ծառայությունների որակի և որակյալ արդյունքների ստացման տեխնիկական հնարավորության գնահատման նպատակով Կատարողը Հաճախորդին հնարավորություն է տալիս ծառայությունների անվճար թեստ կատարել մինչ վճարումը:

6. Պատասխանատվության սահմանափակում

6.1.Կատարողը չի երաշխավորում սերվիսի մշտական հասանելիություն և պատասխանատվություն չի կրում տվյալների փոխանցման և կորստի, միացումների բացակայության, դանդաղ միացման կամ նմանօրինակ խնդիրների համար, որպես հետևանք այնպիսի հանգամանքների, որոնց վրա Կատարողը չի կարող ազդել:

6.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում առաջադրանքների կատարման հնարավոր դանդաղեցման համար՝ կապված մեքենաների հասանելիության և ծանրաբեռնվածության, հերթում տվյալ առաջադրանքի դիրքի և այլ գործոնների, սերվիսի աշխատանքի օբյեկտիվ առանձնահատկության և նրա ընթացիկ դրության հետ:

6.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում ռենդերի որակյալ արդյունքի, սերվիսի անկայուն աշխատանքի, ռենդերի փաստացի ժամանակի անհամապատասխանության, ինչպես նաև Հաճախորդի ֆայլերի կորստի և դրանց հետ կապված Հաճախորդի ցանկացած վնասների համար, եթե Հաճախորդի հետ կնքված լրացուցիչ համաձայնագրով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.4. Կողմերն ազատվում են սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե դա անհաղթահարելի հանգամանքների հետևանք է, որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել, կամ խելամիտ միջոցներով կանխել (ֆորս-մաժոր):

6.5 Այդպիսի հանգամանքների ծագման ժամանակ, Կողմը, որի համար սույն Համաձայնագրով նախատեսված պատականությունների կատարումը դարձել է անհնար, պարտավոր է գրավոր տեղեկացնել այդ մասին մյուս Կողմին տվյալ հանգամանքների ծագման պահից 48 (քառասունութ) ժամի ընթացքում: Ծանուցագիրը պետք է պարունակի տվյալներ ֆորս-մաժորային իրավիճակի բնույթի և այդ Կողմի պարտականությունների կատարման վրա նրա ազդեցության գնահատականի վերաբերյալ:

7. Գաղտնիություն

7.1. Կատարողը պաշտպանում է Հաճախորդի տեղեկատվության գաղտնիությունը և չի հրապարակում այն երրորդ անձանց (բացառությամբ կատարողի աշխատակիցների) առանց հաճախորդի գրավոր համաձայնության: Այս կետը չի վերաբերում այն տեղեկատվությանը, որը հանրամատչելի կամ հասանելի է համարվում: Հաճախորդի կողմից տրամադրված գաղտնի տեղեկատվությունը նրա սեփականությունն է:

7.2. Կատարողը պարտավորվում է պաշտպանել Հաճախորդի գաղտնի տեղեկատվությունը չարտոնված օգտագործումից, տարածումից կամ հրապարակումից, օգտագործելով նաև անվտանգության նույնպիսի համակարգեր, որոնք պաշտպանում են Կատարողի տեղեկատվության գաղտնիությունը:

7.3. Կատարողը երաշխավորում է, որ իր բոլոր աշխատակիցները ծանոթացել են այս բաժնի դրույթների հետ և պատասխանություն են կրում դրանք չկատարելու համար:

7.4. Հաճախորդի իրավունք ունի Կատարողից պահանջել Գաղտնի տեղեկատվության չբացահայտման համաձայնագիր ստորագրել:

7.5. Գաղտնի տեղեկատվությունը պարունակում է Հաճախորդի անձնական տվյալները: Անձնական տվյալների ցանկը, հավաքման կարգն ու նպատակը, մշակման ու պահպանման պայմանները հաստատված է Կատարողի Գաղտնիության քաղաքականության դրույթներով:

8. Վեճերի լուծում

8.1. Սույն Համաձայնության կատարման կամ այդ առիթով ծագած վեճերն ու տարաձայնությունները ենթակա են լուծման Կողմերի միջև բանակցությունների ճանապարհով, ըստ ներկայացվող պահանջների: Պահանջների քննարկման ժամկետը կազմում է 10 (տաս) աշխատանքային օր:

8.2. Սույն Համաձայնագրի կատարմանը վերաբերվող բոլոր տարաձայնությունները միանձնական կարգով չլուծելու դեպքում, կարգավորվում են Զելյաբինսկի մարզի Արբիտրաժային դատարանում:

8.3. Բոլոր բանակցությունները Կողմերի միջև տարվում են առավելապես ռուսերեն լեզվով: